# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար հակահրդեհային սարքերի վերանորոգման-պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի ապրիլի 23-ին կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-24/02» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2024 թվականի մայիսի 16-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 2-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 23.04.2024թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ-ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-24/02» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 16 » « 05 » 2024թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Ծատուրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 23.04.2024թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-24/02» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրով սահմանված 80000000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամ առավելագույն գնից 7492000 (յոթ միլիոն չորս հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը.

1.1.Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | **«ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ** |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ք. Երևան, Հր. Ներսիսյան |
| ՀՎՀՀ՝ 02583241 | փ.ՓԿՂ./Շ/1/103 տարածք |
| Հ/Հ՝ 900011192151 | ՀՀՎՀ՝ 02605138 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Հ/Հ՝ 1930041816500100 |
| | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ |
| **Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան** | **Տնօրեն՝ Վ. Ծատուրյան** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
« 16 » « 05 » 2024թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 2
« 23 » « 04 » 2024թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-24/02» ծածկագրով պայմանագրի)

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | ընդամենը |
| 1 | 50411190/501 | հակահրդեհային սարքերի վերանորոգման-պահպանման ծառայություններ | | | | | 6700000 | 6700000 | 7492000 | 7492000 | 7492000 | 7492000 | 7492000 | 7492000 | 7492000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

**Ղեկավարի պարտականությունները**
**կատարող՝ Ն. Գալստյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Հր. Ներսիսյան
փ.ՓԿՂ./Շ/1/103 տարածք
ՀՀՎՀ՝ 02605138
Հ/Հ՝ 1930041816500100
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

**Տնօրեն՝ Վ. Ծատուրյան**

(ստորագրություն)

Կ.Տ